

## ՀՀ Ֆինանսների նախարարություն

### Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 3/7

27 հունվարի 2015 թ.

Քննարկվեց «Արս Ֆրոզեն Ֆուդ» ՍՊԸ 27.12.2014 թ-ի բողոքը ՀՀ ՖՆ Էրեբունու ՀՏ 22.12.2014 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 275098 որոշման դեմ:

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ 17.11.2014 թ-ին կազմվել է ՀՀ ՖՆ Էրեբունու ՀՏ թիվ 6105048 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով արձանագրվել է «Արս Ֆրոզեն Ֆուդ» ՍՊԸ (այսուհետ նաև ընկերություն) կողմից աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու փաստ (թվով 10 աշխատակից): Արդյունքում Ակտով կիրառվել է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված տուգանքը՝ գումարով 6.000.000 դրամ:

Ելնելով վերոգրյալից ՀՀ ՖՆ Էրեբունու ՀՏ պետի կողմից 22.12.2014 թ-ին ընդունվել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 275098 որոշումը, որով ընկերության տնօրենը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.5-րդ հոդվածի հատկանիշներով ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ գումարով 500.000 դրամի չափով:

Ընկերության կողմից Ակտը բողոքարկվել է վարչական և դատական կարգով, որի հետևանքով ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի «դ» ենթակետի և 70-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով Հանձնաժողովի 23.12.2014 թ-ի թիվ 34/4 որոշմամբ «Արս Ֆրոզեն Ֆուդ» ՍՊԸ 05.12.2014 թ-ի բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթը կարճվել է:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի համաձայն. «Վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝ ա) անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը»:

Քննարկվող դեպքում, հաշվի առնելով, որ ընկերության կողմից վիճարկվող ՀՀ ՖՆ Էրեբունու ՀՏ 22.12.2014 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 275098 որոշումը կայացվել է հիմք ընդունելով ՀՀ ՖՆ Էրեբունու ՀՏ 17.11.2014 թ-ի թիվ 6105048 ակտով արձանագրված խախտումները, որը վիճարկվում է դատական կարգով, հետևապես անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը, մինչև վարչական դատավարության կարգով Ակտի վերաբերյալ որոշում՝ գործն ըստ էության լուծող վերջնական դատական ակտի կայացնելը:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի դրույթներով՝ Հանձնաժողովը գտնում է, որ «Արս Ֆրոզեն Ֆուդ» ՍՊԸ բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթը ենթակա է կասեցման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

«Արս Ֆրոզեն Ֆուդ» ՍՊԸ 27.12.2014 թ-ի բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթը կասեցնել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝

  
  
Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ